

ԵՐԵՔ ՅԱՐԳԻ ՊԱՇՏՈՆՆԵՐ

«Երբ որ մէկ մարդու նպատակ
հարստանալ է, արդէն հնարներու
ազնուութիւնը եւ անազնութիւնը
նորա աչքէն փախչում են»:

Ռափայէլ Պատկանեան

Ռափայէլ Պատկանեանի երրորդ
հատորին մէջ տեղ գտած «Տիկին Եւ
Նաժիշտ» վերնագրով վէպը, ուր երկու
տարբեր տեսարաններով երեւան կու
գայ Վարդան Յուսիկեան անունով
պատուական թժիշկը, հանգամանօրէն
կը խօսի հասարակութեան ծառայող
երեւ կարեւոր ու նուիրական
պաշտօններու մասին: Թժիշկ Վարդան
հետաքրքրական խորհրդածութիւններով
կը ճշդէ բարձր ու վսեմ տեղը քահանայի,
մանկավարժի եւ թժիշկի: Յարգելի
թժիշկը ոչ միայն պատուական տեղ
կ'ապահովէ այս երեւին համար, այլեւ
անոնցմէ խիստօրէն կը պահանջէ որ
ըլլան գուսպ ու չափաւոր իրենց
պահանջներուն մէջ, ըլլան նաեւ օրինակ
այլոց եւ ցոյց տան աւելի ծառայա-
սիրութեան ոգի, որուն համար կոչուած
են, քան՝ արծաթասիրութեան եւ
ընչաքաղցութեան: Ահա թէ ինչ կը գրէ
թժիշկ Վարդան. «Երեւ պաշտօն կայ,
ուր փողի սէրը մարդուս համար
դառնում է աններելի մոլութիւն. դո՛ւք
են պաշտօնները քահանայի,
մանկավարժի եւ թժիշկի: Ես չեմ ստում,
որ երեւին փող եւ ապրուստ պէտք չեն.
ամենեւին ոչ. քայց եթէ սոցա աչքում
փողը առաջին կարգումն լինի, նոցա
գարշելի կը դարձնէ մարդոց աչքում»: Բայց
չէ որ վաճառականը, փաստաբանը,
արհեստաւորը, փերեզակը եւ ուրիշներ,
ամէնքն առանց բացառութեան
դրամսէր են եւ օրնիրուն կը տֆին ի
շահ իրենց գրպանին ու ստամոքսին,
հաճոյքին ու վայելքին: Հետեւաբար,

ինչու առանձնացնել միմիայն այս
երեւք եւ պատուիրել անոնց որ հեռու
մնան նիւթասիրութենէ եւ նման
մոլութիւններէ: Թժիշկ Վարդան
հետեւեալ համոզիչ ու տրամաբանական
պատասխանը կու տայ. «Ամէնքս
ներողամիտ աչքով նայում ենք արծա-
թասէր վաճառականի վրայ. եթէ մէկ
գինուորական սիրէ ճոխ ու գեյս
ապրուստ, մենք ամենեւին նիւթ չեն
դարձնում մեր խօսակութեանը նորա
այդ թուլութիւնը, քայց եթէ մէկ
քահանայ, կամ մէկ մանկավարժ, կամ
մէկ թժիշկ սիրէ ճոխ ուտել-խմել, շոքայ
ապրել, պերճ հագուել ու զարդարուել,
մենք արդէն մեր մտքի մէջ նոցա
կարգազուրկ եւ պաշտօնական ենք անում,
չենք հաւատում նոցա օգտակարութեանը,
եւ չենք գնահատում նոցա հմտութիւնը
իրանց արուեստի մէջ: Ինչու: Այդ
ամէնին էլ հասկանալի է, ամէնքն էլ
գիտեն: Թէ՛ քահանան, թէ՛ թժիշկը եւ
թէ՛ մանկավարժը պաշտօն մտած օրից
պիտի շարունակ սովորի եւ
կատարելագործուի. դրա համար
ժամանակ է պէտք, իսկ եթէ նոքա
անձնատուր լինին փող նարելու եւ ճոխ
ապրուստ վայելելու, նոցա թանկագին
ժամանակը իրենց ընտրած արուեստի
համար անպտուղ կը կորչի, եւ նոքա ոչ
միայն չեն կատարելագործուի, ոչ
միայն իրենց ստացած գիտութիւնը կը
պահպանեն, այլ օրէօր կը մոռանան
այն եւ կը տգիտանան»:

Ուրեմն, այս երեւ պաշտօնները
ընտրեալ են եւ պաշտօնեաները պէտք

է շարունակական անձանձրոյթ աշխատանք, լարուածութիւն եւ նուիրուածութիւն ցուցաբերեն կատարելագործելու իրենց ծառայութեան դաշտէն ներս: Հարեւանցի շեղում մ'իսկ իրենց կոչումէն կամ պարզ ու համեստ ապրելակերպէն, վտանգի կրնայ ենթարկել իրենց կոչման անկեղծութիւնը եւ նուիրական ծառայասիրութիւնը:

Հասարակութեան մշտական ծառայութեան վստահուած այս ներհուն մշակները պարտին աշալրչութիւն, զգոնութիւն ու քացառիկ բարեխղճութիւն ցուցաբերել իրենց նուիրական գործին հանդէպ հետամուտ ըլլալով ընդարձակել իրենց գիտութեան պարագիծը եւ խորացնել իրենց մասնագիտութիւնը ի շահ, ի վայելումն եւ ի բարօրութիւն համայն մարդկութեան: Դրամը՝ ամենայն արմատը չարեաց, թոյլ պիտի չտայ որ թոյլ ու մեղկ նկարագիրով ու անձնապաշտ քնաւորութեամբ անձր կեդրոնացնէ իր ճիգը եւ աշխատանքը իր մտահորիզոնը ընդարձակելու եւ մտապաշարը հարստացնելու:

Բժիշկ Վարդան Երկրորդ պատճառ մը եւս յառաջ կը բերէ դրամասիրութեան անհանդուրժողութեան. «Երկրորդ պատճառ եւս կայ, որ ժողովուրդը չի ներում այդ երեք պաշտօնին նուիրուած մարդոց արծաթասիրութիւն եւ գեխութիւն: Քահանան, մանկավարժը եւ բժիշկը ոչ միայն խօսքով պարտաւոր են խրատելու ժողովրդին, այլեւ իրենց անձնական համեստ կեանքով լինել նորա օրինակ, որն աւելի կը համոզի, քան թէ ամենաճարտար լեզուն»:

Ի՞նչ է հասարակութեան մէջ հիմնական ու կենսական դերը այս երեք տարբեր պաշտօնեաներուն եւ ինչու բարձր կը գնահատուի անոնց գործունէութիւնը:

Եկեղեցականը այն հազուագիւտ ու ընտրեալ անձն է, որ պէտք է մարմնաւորումը հանդիսանայ առաջինութեանց ու քացառիկ կարողութեանց: Ան օրինակելի ու տիպար անձն է, որ իր խոնարհութեամբ, համեստութեամբ ու մեղուաշան աշխատասիրութեամբ, կը զինուի ու կը զրահուի գիտութեամբ ու կը գօտեպնդուի լաւագոյն ու ընտրելագոյն նկարագրագիծերով: Ան կանչուած է իր մշտապաշարը կիսելու նորահաս սերունդին հետ եւ իր անբասիր նկարագիրով, մաքրակենցաղութեամբ եւ ուղիղ վարքագիծով օրինակ դառնալու անոր: Աւետարանական մշտահունչ պատգամ է՝ «Բազումք են կոչեցեալք, սակաւք են ընտրեալք»: Այս դժուարին խաչակրութիւնը վստահուած է լոկ սակաւաթիւ զոհեալ հոգիներու: Եկեղեցականը իր բոլորամատոյց ու անսակարկ նուիրումով, ժիր ու բարեբեր գործունէութեամբ, կանչուած է դառնալու մտփի, խօսփի ու գրչի մարդ: Եկեղեցական ասպարէզ ընդգրկողներ ի մտի ունենալու են որ այս ծառայութեան մարզը ամենեւին շահաբեր կամ հասութաբեր չէ: Եկեղեցականը պէտք է ալ կնկալէ առատ վարձատրութիւն, կամ փնտռէ հարստութիւն, փառք, թագ ու պատիւ: Անոր ձեռքը մշտապէս պէտք է գտնուի մանին վրայ, իսկ աչքը՝ հեռուն՝ լայնատարած ու անհուն հորիզոնին, վասն զի մեր Մեծ Վարդապետին մեզի կտակած սուրբ գործը ունի լայն տարողութիւն եւ ծանր կշիռ: Ազգային ու եկեղեցական պարտականութիւնները միշտ պահանջած են անձնագոհ անձինք, որոնց միակ գաղափարականը եղած է ծառայութիւն, եւ ոչ անպայման՝ վարձատրութիւն: Այս տեսանկիւնէն դիտուած, մեր եկեղեցական պատմու-

թիւնը արձանագրած է բազում անձանց անուններ, որոնք ինքնակամօրէն զոհաբերած են իրենց բովանդակ կենաց օրերը յանուն բարձր, վսեմ ու ազնիւ գաղափարի:

Մանկավարժը եւս կոչումով այն բարձր անձնաւորութիւնն է, որ անվերջ սերունդներուն գիտելիք ջամբելու հրաւիրուած է: Դաստիարակն ալ ինքզինքն դէմ յանդիման կը գտնէ ինքնակատարելագործութեան, վասն զի անոր գիտութեան պաշարը եւս մշտական նորոգութեան կարիք ունի: Ուսուցիչը այն անձն է, որ կը մաշի ու կը ծիրի մոմի մ'հանգոյն լոյս սփռելով: Անոր հոգեկան բաւականութիւնը յարատեւ գիտութիւն հայթայթելու, անով լուսաւորելու, կրթելու, ուսում ջամբելու, ազնուացնելու, բարձրացնելու, վեհացնելու ու բիւրեղացնելու մէջ է: Հոգիի, մտքի եւ մարմնի հոգատարներ են երեքն ալ, որոնց կ'ապաւինի ու կը վստահի ժողովուրդը: Վստահութեան խախտում չեն կրնար ցուցաբերել անոնք: Ժողովուրդը իր մեղքերը, հոգեկան ախտերը եւ ցաւերը հոգեւորականին կը խոստովանի, միշտ ի մտի ունենալով, որ իր հոգեւոր հայրը խոստովանաւոր դեր պիտի կատարէ եւ գաղտնի պահէ իրենց վստահուած ամէն խօսք: Դաստիարակին վրայ դրուած վստահութիւնը եւս մեծ է: Անոր խնամքին ու դաստիարակութեան կը յանձնուին հոգեւոր կրթութիւնը: Անոր շունչին տակ է, որ հասակ պիտի առնեն անհամար անչափահաս զաւակները ազգին: Առողջ միտք առողջ մարմնի մէջ ունենալու համար պէտք ունինք այս երրորդութեան միասնական գոյութեան, աշխատանքին ու սերտ գործակցութեան:

Հոգեւորականը, դաստիարակը եւ բժիշկը հարկ է որ ըլլան գթառատ,

ողորմած, խղճոտ, գիտակից, կարեկից, սրտակից: Անոնց բարեգրութիւնը նշան է սրտի բարութեան ու բարեգործութեան պատրաստակամութեան:

Այս երեք պատուական պաշտօնեաները իրենց երջանկութիւնը պէտք է փնտռեն հասարակութեան բարօրութեան ու բախտաւորութեան մէջ: Անոնք կ'արժեւորեն իրենց կեանքը մարդկութեան բերած իրենց բարեբար նպաստով: Այլ խօսքով, իրենց կեանքը կ'իմաստաւորուի իրենց ներդրումով ու հաւաքականութեան մատուցած իրենց լուսնայով: Այդ ծառայութիւնը իր շրջագիծին մէջ պէտք է պարփակէ ներգործական գործունէութիւն եւ ոչ թէ կրաւորականութիւն կամ անտարբերութիւն, ինչպէս նաեւ՝ հոգատարութիւն, նախաձեռնութիւն, անձուրացութիւն, գ'ոհողութիւն եւ սրբազան խենթութիւն: Մեր պատմութիւնը լի է սրբազան խենթերու կողմէ գործուած բազմապիսի աննկարագրելի ու անպատում բարոյական զոհողութիւններով ու սխրագործութիւններով:

Ինչքան ցաւալի է որ հոգեւորականն ու դաստիարակը, երկու անմահ ու անփոխարինելի պաշտօնեաները, անցեալին, ի հարկին չեն գնահատուած, այլ անոնց գոյութիւնը չարաչար քարշ եկած է ամենադաժան ձեւով: Ընտանիքներու գլուխները մշտապէս կոչ ըրած են իրենց զաւակներուն չընդգրկել նման անշնորհակալ ու ապերջանիկ ասպարէզներ եւ մէկանգամը դմիշտ փարսախներով հեռու մնալ ազգային ու եկեղեցական գործերէ:

Անցեալին ծանր ու անմխիթար եղած է եկեղեցականին ու դաստիարակին կեանքը: Անոնք կրած են անասելի ու անպատում զրկանքներ,

մանաւանդ նիւթական գետնի վրայ: Զգնահատուելու զգացումը պարզապէս ահռելի է ու անտանելի: Ժողովուրդը չէ կրցած ըստ արժանւոյն գնահատել իր մտքի մշակները: Մեր տկարագոյն կողմը եղած է թերագնահատումը արժանաւորին: Հաւաքաքար տառապած ենք՝ երախտամոռացութեան: Պատկանեան կը յիշեցնէ մեզ որ «ապերախտութիւնը ամէն մոլութիւններին մէջ ամենավատթարն է»:

Այսօր, լուսաւորութեան այս շեղ դարուն, երբ կենսապայմանները եւ վարձատրութեան միջոցները անհամեմատելիօրէն բարւոքուած են, կրթական ու եկեղեցական մարգերէն ներս մուտք գործողներ կրկին կը մնան սակաւ ու անբաւարար: Կրկին կը տուժեն հայ դպրոցն ու եկեղեցին: Ո՞ր է երիտասարդութիւնը եւ ի՞նչ բանի կը դիմէ ներկայիս: Շատեր կը դիմեն բժշկութեան, իսկ այլք՝ փաստաբանութեան, առեւտուրի եւ այլ զանազան շահաբեր արհեստներու եւ նիւղերու: Սակաւ լոկ լրջօրէն կը մտածեն ծառայել ազգին ու եկեղեցիին, հայ մտքին ու հոգիին, հայ տարրին ու տառին: Բժշկութիւնը, անկասկած, կոչում է ու ծառայութիւն, բայց ան դժբախտաբար վերածուած է շահի աղբիւրի: Ռափայէլ

Պատկանեան կը գրէ. «Մեծագոյն մասը հայ բժիշկներին սովորութիւն ունի, հէնց որ թողեց համալսարանական նստարանը, իսկոյն հետամուտ լինել, որ իւր ապրուստը ապահովացնէ: Ընթերցանութիւն, պարապմունք, ուսումնական փորձեր, կատարելագործութիւն, հետախուզութիւն, բոլորը ցնդում են նրա մտքէն, նրա բոլոր իմաստութիւնը սահմանափակում է այն կիսկատար գիտութեամբ, որ նա իւր պատանեկութեան օրերը օրամէջ ֆաղել էր փրոֆեսորներին դասախօսութիւններէն...»:

Ներկայիս, մանաւանդ արեւմտեան աշխարհի մէջ, պայմանները եւ պահանջները ամբողջովին փոխուած են անշուշտ: Բժիշկները այս ափերու վրայ կը գտնուին ծանր հարկադրանքի ու պատասխանատուութեան տակ: Այնուամենայնիւ, ոմանց համար բժշկութիւնը կը մնայ լոկ իրրեւ արհեստ:

Երեւ յարգի պաշտօնները իրենց բարձրութեամբ ու անմատչելիութեամբ կը վերապահուին լոկ վսեմ անհատներու, որոնք տոգորուած ու լիցքաւորուած են գաղափարականով եւ յուսադրուած անոր լիակատար գործադրութեամբ ու իրականացմամբ:

ԶԵՆՈՐ ՔԷՆՅ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ